

*ԵՊՅ ՀՀԻ ՎՐԱՑԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ*

Հայ-վրաց գրական, պատմամշակութային կապերն սկիզբ են առել երկու ժողովուրդների գրերի ու դպրության ծննդյան օրվանից և սերնդից սերունդ փոխանցվել ուսանելի ավանդներով, ապահովել բարեկանության ու համագործակցության շարունակական ընթացք: Այդ կապերը նոր բովանդակություն ստացան, երբ Վրաստանն ու Հայաստանը ունեցան իրենց ազգային համալսարանները:

Թբիլիսիի համալսարանը հիմնադրվել է 1918 թ. հունվարի 26-ին և առաջին իսկ օրից նրա ուսումնական ծրագրերում ներառվել են հայագիտական առարկաներ, մասնավորապես՝ գրաբար, ժամանակակից հայոց լեզու և հայ հին պատմական գրականություն:

1922 թ-ից Թբիլիսիի համալսարանում գործում է հայագիտության ամբիոնը, 1945-ից՝ հայոց լեզվի և գրականության բաժինը /այժմ՝ հայագիտական ուղղություն/:

1966 թ. ԵՊՅ և ԹՊՀ բանասիրական ֆակուլտետների միջև կնքվեց փոխադարձ համագործակցության պայմանագիր, որի հիման վրա և ի նշանավորումն վրաց մեծ բանաստեղծ Շոթա Ռուսթավելու ծննդյան 800-ամյակի, հիմնադրվեց վերջինիս անունը կրող գիտաուսումնական կաբինետ: Այդ առթիվ հրավիրված գիտական առաջին նստաշրջանում հայ-վրացական բանասիրության խնդիրներին նվիրված զեկուցումներ կարդացին ակադեմիկոսներ Մ. Ներսիսյանը, Գ. Սևակը, Է. Ջրբաշյանը, Մ. Մկրյանը, ԹՊՀ պրոֆեսորներ Ա. Շանիձեն, Ա. Ուրուշաձեն, Պ. Կեկելիձեն, Ս. Խուցիշվիլին, Ի Մեգրելիձեն և այլոք:

Կաբինետի աշխատանքները ավելի ամուր հիմքերի վրա դնելու նպատակով բանասիրական ֆակուլտետի դեկան, պրոֆ. Մ. Մկրյանը և հայոց լեզվի ամբիոնի վարիչ, պրոֆ. Գ. Սևակը ձեռնամուխ եղան Թբիլիսիի բուհերի համապատասխան ֆակուլտետների ու ամբիոնների հետ կապեր հաստատելու և անհրաժեշտ գրականություն ձեռք բերելու գործին:

Ուսումնական կաբինետի հիման վրա 1970 թ. ստեղծվեց հայ-վրացական բանասիրության հետազոտական խումբ և մտավ հայագիտական կենտրոնի համակարգ (մինչ այդ գործում էին վրացերենն ու ուսումնասիրողների խմբակներ):

Կաբինետի նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ գիտական նստաշրջաններ կան սեսիաներ են հրավիրվել ակադ. Ա. Շանիձեի ծննդյան 80 (1968), բանաստեղծ Ն. Բարաթաշվիլու ծննդյան 150 (1968), Գ. Սունդուկյանի ծննդյան 150 (1976), Ի. Շավճավաձեի ծննդյան 140 (1978), Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միավորման 150-ամյակների (1978) առթիվ:

Խմբի աշխատակիցները անցկացրել են նաև մշակութային միջոցառումներ՝ գրքերի քննարկումներ, հանդիպումներ վրաց գրականության ու արվեստի գործիչների հետ, կազմակերպել են հայ - վրացական բանասիրությանը նվիրված հարց ու պատասխանի երեկոներ, դասախոսություններ, բացել և վարել են վրաց լեզվի ուսուցման խմբակներ:

Կաբինետի աշխատանքները մինչև իր մահը ղեկավարել է ակադ. Գ. Սևակը (1904-1981):

1981-2007թթ. հայ-վրացական բանասիրության գիտահետազոտական խմբի ղեկավարի և ուսումնական կաբինետի պարտականությունները հասարակական հիմունքներով կատարել է հայագիտական կենտրոնի ավագ գիտաշխատող Յր. Ս. Բայրամյանը:

Հիմնադրման տարում կաբինետի աշխատանքներում ընդգրկված են եղել 4 գիտաշխատող և երկու լաբորանտ:

\* \* \*

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի և Վրաստանի հոգևոր կապերը գրեթե խզված էին: Չկային փոխայցելություններ, չկար համագործակցություն, չէին կազմակերպվում միջոցառումներ... Սառույցը տեղից շարժվեց 2006-ի մայիսից, երբ ԵՊՀ-ի բարձրագույն օղակներում տեղի ունեցան փոփոխություններ. հենց հուլիսի սկզբին համալսարանն իր հարկի տակ ընդունեց Հայաստանում անցկացվող վրացական պոեզիայի օրերի մասնակիցներին և կազմակերպեց սեմինար, որտեղ զեկուցումներով հանդես եկան հայ բանասիրության և պատմության ֆակուլտետի դասախոսներն ու ասպիրանտները, հաջորդեց նորընտիր ռեկտոր, պրոֆեսոր Ա. Յ. Սիմոնյանի պաշտոնական այցը Աջարիայի մայրաքաղաք՝ Բաթումի, պետական համալսարան, որտեղ կնքվեց համագործակցության պայմանագիր: Նույն թվի օգոստոսին Երևանի պետական համալսարանում հիմնադրվեց վրացագիտության կենտրոն (հրամանը եղել է 2007թ. փետրվարին):

Նախապատրաստական փուլում՝ նույն թվականի ընթացքում, կենտրոնի ղեկավարը ստեղծել է կենտրոնի կանոնադրությունը, ձևավորել է աշխատանքային խումբ, կազմել է գիտահետազոտական աշխատանքների և հնգամյա թեմատիկ պլան-պրոսպեկտ, նաև «Վրացագիտություն» մասնագիտացման ուսումնական ծրագրերը, կատարել է եռամյա գործունեության թեմաների ընտրություն, ինչպես նաև զբաղվել է մասնագետների փնտրտուքով և համալրել հաստիքները: Կենտրոնը առ 01.01.2011թ. ունի 3 հիմնական աշխատող՝ ղեկավար, մեկ կրտսեր գիտաշխատող և մեկ լաբորանտ, վերջին երկուսը առայժմ գիտական կոչում չունեն:

Վրացագիտության հայկական կենտրոնը ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ստորաբաժանումներից է, հաստիքավորվել է 2008թ. սկզբից: Նրա գոյությունը միջբուհական և միջպետական իրադարձություն է:

### *Հիմնական ուղղությունն ու նպատակը*

Գիտահետազոտական աշխատանքները հիմնականում նվիրված են հայ-վրաց լեզվական-բառարանագրական առնչությունների ուսումնասիրությանը, հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն թարգմանությունների արժևորմանը, հայ գրականագիտության արձագանքներին՝ վրաց գրականությանը, և վրաց գրականագիտության արձագանքներին՝ հայ գրականությանը, հայ-վրաց գրական-մշակութային կապերի խնդիրներին:

Կենտրոնի նպատակն է ուսումնասիրել Վրաստանի պատմությունը, գրականությունը, լեզուն ու մշակույթը, ստեղծել համապատասխան ծրագրեր, անհրաժեշտ դասագրքեր ու ձեռնարկներ, բառարաններ, պատրաստել հայ վրացագետների կադրեր, սերտացնել գիտակրթական կապերը Երևանի և Թբիլիսիի մայր բուհերի միջև:

Ծրագրված են գիտական սեմինարներ: Հիմնական գործունեության առաջին իսկ տարում՝ 2008թ. ապրիլին, կենտրոնը հրավիրեց միջազգային գիտաժողով՝ նվիրված հայ-վրաց բանասիրությանը լայն առումով (պատմություն, լեզվաբանություն, մշակութաբանություն, աղբյուրագիտություն, գրական-մշակութային կապեր), որին հայ վրացագետներից և հայ բանասիրության ֆակուլտետի դասախոսներից բացի, մասնակցեցին և զեկուցումներով հանդես եկան նաև Թբիլիսիի պետական համալսարանի հայագիտական ուղղության մի քանի գիտաշխատող և դասախոս ՎՅ ԳԱ ակադեմիայի թղթակից անդամ հայագետ, պրոֆ. Զազա Ալեքսիձեի ղեկավարությամբ:

Ըստ Երևանի և Թբիլիսիի մայր բուհերի միջև կնքված համաձայնագրի՝ լեզուների ինացությունը տեղերում կատարելագործելու նպատակով կկատարվեն մագիստրոսների և ասպիրանտների փոխանակություն:

Արդեն հինգերորդ տարին է՝ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում առկա են «Վրացագիտություն» մասնագիտացումով խմբեր: Պատմության ֆակուլտետի արվեստաբանության բաժնում և հայ բանասիրության ֆակուլտետում վաղուց ի վեր գործում են ժամանակակից վրաց լեզվի կամընտրական դասընթացներ: Այդ դասընթացները հիմնականում վարում են կենտրոնի աշխատակիցները:

Կենտրոնը գիտակրթական և դասագրքերի ստեղծման բնագավառում հասել է որոշակի հաջողությունների:

Մասնավորապես՝ կենտրոնի ղեկավար, բ.գ.թ., դոց. Հրաչիկ Բայրամյանը հեղինակել և հրատարակել է հետևյալ գրքերը՝ «Վրաց գրականությունը V-XIX դարերում» (ուսումնական ձեռնարկ հումանիտար ֆակուլտետների համար): Երևանի համալս. հրատ., 2007, 324 էջ: «Հայերեն-վրացերեն գրուցարան», Երևան, «Արեգ», 2009 (II հրատ.), 128 էջ: «Վրաց լեզու. Հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն» (ուսումնական ձեռնարկ բուհերի հումանիտար ֆակուլտետների համար), Երևանի համալս. հրատ., 2010, 252 էջ: «Հայ-վրացական գրական կապերի պատմությունից» (հոդվածների և

ուսումնասիրությունների ժողովածու), Երևանի համալս. հրատ., 2010, 256 էջ:

## **Կենտրոնի ղեկավարի մասին**

### **Կենսամատենագիտական տեղեկություններ**

Հրաչիկ Սմբատի Բայրամյան՝ գրականագետ, թարգմանիչ, բանասիրական գիտությունների թեկնածու (1975), դոցենտ (1981), Հայաստանի գրողների միության անդամ (1985):

Ծնվել է 1945 թ. հունիսի 18-ին ՀՀ Տավուշի մարզի (նախկինում՝ Նոյեմբերյանի շրջան) Բաղանիս գյուղում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1963-1964 ուս. տարում, ընդունվել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի արևելագիտության (պարսից լեզու և գրականություն) բաժինը:

1967-1968 ուս. տարում ուսանողների փոխանակության կարգով գործուղվել է Թբիլիսիի պետական համալսարան՝ վրացերեն սովորելու: 1969թ. ավարտել է երկու համալսարանների հանապատասխան ֆակուլտետների դասընթացները և աշխատանքի նշանակվել ԵՊՀ հայ-վրացական բանասիրության կաթինետում:

1971-1974թթ. սովորել է ԹՊՀ նպատակային ասպիրանտուրայում: Այդ տարիներին արտասահմանյան և ռուս գրականություն է դասավանդել տեղի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնում: Ակտիվորեն մասնակցել է վիրահայ գրական կյանքին (աշխատակցել է պարբերական մամուլին, կարդացել զեկուցումներ ու դասախոսություններ):

1975թ. փետրվարին Վրաստանի ԳԱԱ վրաց գրականության պատմության ինստիտուտում «Վրաց գրականությունը նախախորհրդային հայ քննադատության մեջ (1846-1916թթ.)» թեմայով թեզ է պաշտպանել (վրացերեն) և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1975-2006թթ՝. ԵՊՀ հայագիտական կենտրոնի կրտսեր, ապա ավագ գիտաշխատող:

1977-2001 թվականը հիշյալ կենտրոնի գիտխորհրդի քարտուղար:

1981-ից՝ հայ-վրաց բանասիրության գիտահետազոտական խմբի գիտական ղեկավար:

2006 թվականից ԵՊՀ ՀՀԻ վրացագիտության հայկական կենտրոնի տնօրեն:

Գիտահետազոտական աշխատանքներին զուգընթաց վրացագիտական առարկաներ է դասավանդում հայ բանասիրության և պատմության ֆակուլտետներում:

Հեղինակ է բուհական երեք դասագրքի, երկու զրուցարանի, ավելի քան 120 գիտական աշխատությունների (հոդվածներ,

ուսումնասիրություններ, գրախոսություններ), որոնք հրապարակվել են հայերեն, ռուսերեն, վրացերեն և վերաբերում են հայ-վրաց գրական, պատմական, մշակութային առնչություններին, վրաց հին, նոր և նորագույն գրականությանը: Վրաց ժամանակակից և դասական գրողներից թարգմանել և առանձին գրքերով հրատարակել է երկու տասնյակ գիրք: Իսկ ավելի քան 100 նովել ու պատմվածք նրա թարգմանությամբ տպագրվել են Երևանի և Թբիլիսիի հայկական մամուլում և գրական հանդեսներում:

Նրա սցենարով նկարահանվել և հայկական հեռուստատեսությամբ ցուցադրվել են «Իրակլի Աբաշիձե» (1984), «Նոդար Դումբաձե» (1985, ցուցադրվել է նաև վրացական հեռուստատեսությամբ), «Սայաթ-Նովա» (1987), «Գալակտիոն Տաբիձե» (1987), «Գաբրիել Սունդուկյան» (1988), «Շոթա Ռուսթավելի» (1990) ուսումնական և գիտահանրամատչելի ֆիլմերը:

Ձեկուցումներով պարբերաբար հանդես է գալիս հայագիտությանն ու վրացագիտությանը նվիրված միջազգային գիտաժողովներում, ինչպես նաև պատմական ու հորեյանական տարեթվերի առթիվ կազմակերպված հանդիսավոր նիստերում:

Հայ-վրաց գրական-մշակութային կապերի ամրապնդման գործում ներդրած ավանդի, վրաց դասական և ժամանակակից գրողների երկերի բարձրորակ թարգմանությունների և հայ-վրաց բանասիրությանը նվիրված աշխատությունների համար արժանացել է ՎԳՄ Իվանե Մաչաբելու անվան մրցանակի:

\*\*\*\*\*

Հր. Բայրամյանը հեղինակ է վրաց գրականության և վրաց լեզվի դասագրքերի, զրուցարանների, շուրջ 60 գիտահետազոտական աշխատանքների:

Լեզուները՝ հայերեն, վրացերեն, ռուսերեն, պարսկերեն, գերմաներեն:

Կուսակցական պատկանելիությունը՝ անկուսակցական:

Ընտանեկան դրությունը՝ ամուսնացած, ունի երկու զավակ՝ մեկ տղա և մեկ աղջիկ:

Հեռ. /374 10/ 61-54-04, /374 94/ 84-48-64

Էլ փոստ՝ h.bayramyan@ysu.am

h.bayramyan@mail.ru

Գիտական հետազոտությունները վերաբերում են վրաց հին, նոր ու նորագույն գրականությանը, վրաց լեզվին, հայ-վրացական գրական առնչություններին, հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն թարգմանություններին և թարգմանության տեսությանը: Կատարում է նաև գեղարվեստական թարգմանություններ: Հայ բանասիրության ֆակուլտետում դասավանդում է վրացագիտական առարկաներ /ներքին համատեղություն, 0.5 դրույք/:

**Հր.Բայրամյանի հեղինակած  
գրքերի մատենագիտական ցանկ**

1. Ակնարկներ վրաց նոր գրականության պատմության (1800-1890):  
Ուսումնական ձեռնարկ բանասիրական ֆակուլտետների համար: Երևանի  
համալս. հրատ., 1983, 208 էջ:
2. **Русско-грузинский разговорник, Ереван, “Арег”, 2005, 128 с.**
3. Հայերեն-վրացերեն զրուցարան, Երևան, «Արեգ», 2009 (II հրատ.),  
128 էջ:
4. **Վրաց գրականությունը V-XIX դարերում:** Ուսումնական ձեռնարկ  
հումանիտար ֆակուլտետների համար: Երևանի համալս. հրատ.,  
2007, 324 էջ:
5. **Վրաց լեզու.** Հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն  
(դասագիրք բուհերի հումանիտար ֆակուլտետների ուսանողների  
համար) Երևանի համալս. հրատ., 2010, 252 էջ:
6. **Հայ-վրացական գրական կապերի պատմությունից** (հոդվածների  
ժողովածու) Երևան, Երևանի համալս. հրատ., 2010, 256 էջ:

***Թարգմանել և հրատարակել է՝***

***ա. գիտահանրամատչելի.***

7. **Արվելածե Բոնդո,** Գաբրիել Սունդուկյանը և վրաց իրականությունը:  
«Հայաստան», Երևան, 1976, 88 էջ:
8. **Գրիշաշվիլի Իոսեբ,** Հին Թիֆլիսի գրական բոհեմը: «Մերանի»,  
Թբիլիսի, 1989, 160 էջ:
9. **Ուղեցույց աստղը** (վրաց մտավորականները Հովհաննես Թումանյանի  
մասին): «Զանգակ-97», Երևան, 1999, 208 էջ:
10. **Հայ-վրաց** գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում  
(1988-1990): Պրակ I, «Զանգակ-97», Երևան, 2001, 160 էջ:

**բ. գեղարվեստական**

11. **Ինանիշվիլի Ռևազ,** Լռություն ճանապարհին (պատմվածքներ):  
«Սովետական գրող», Երևան, 1979, 132 էջ:
12. **Մրելաշվիլի Լադո,** Իդալթոեցի տղաները (վիպակ): «Սովետական  
գրող», Երևան, 1981, 236 էջ:
13. **Փանջիկիձե Գուրամ,** Ակնաքար (վեպ): «Սովետական գրող», Երևան,  
1982, 268 էջ:
14. **Դումբաձե Նոդար,** Հավերժության օրենքը (վեպ): «Սովետական գրող»,  
Երևան, 1983, 264 էջ:
15. **Իոսելիանի Օտիա,** Այն, ինչ լավ է, դժվար է (պատմվածք):  
«Սովետական գրող», Երևան, 1985, 32 էջ:
16. **Դումբաձե Նոդար,** Ընտիր երկեր (երկու հատորով): Հ. I, «Սովետական  
գրող», Երևան, 1987, 584 էջ:

**17. Դուրբաձե Նողար**, Ընտիր երկեր (երկու հատորով): Զ. II, «Սովետական գրող», Երևան, 1987, 526 էջ:

**18. Դուրբաձե Նողար**, Կուկարաչա (վիպակ): Պատմվածքներ: «Արևիկ», Երևան, 1990, 336 էջ:

**19. Միշվելաձե Ռևազ**, Նովելներ, «Զանգակ-97», Երևան, 2001, 50 էջ:

**20. Միշվելաձե Ռևազ**, Գյուղի Մադոննան (նովելներ), «Զանգակ-97», Երևան, 2006, 244 էջ:

**21. «Սիրապարտները»** (Արդի վրացական արձակ), ԶԳՄ հրատ., 2010թ., 240 էջ (գրքի մեջ մտնող 14 հեղինակի 25 նորավեպ և պատմվածք թարգմանել է Զր. Բայրամյանը):

### ***Կազմել և ծանոթագրել է***

**22. Ձայն բարեկամության:** «Նակադուլի», Թբիլիսի: «Սովետական գրող», Երևան, 1977, 496 էջ:

**23. Վրացական պոեզիա** («Ուսանողի գրադարան» մատենաշար): Երևանի համալս. հրատ., 1983, 440 էջ:

**24. Հայ գրողները վրաց գրականության մասին** (Նյութերի ծողովածու): Երևանի համալս. հրատ., 1986, 208 էջ:

**25. Վրաց երկինք** («Համաշխարհային գրականություն պատանիների համար» մատենաշար. ընդարձակ առաջաբանով): «Արևիկ», Երևան, 1990, 768 էջ:

### ***Խմբագրել է՝***

**Վրացերեն – հայերեն բառարան**, Երևանի համալս. հրատ., 2005, 716 էջ:

**Անահիտ Անի Բոստանջյան**, Մշակույթի բազմաշնորհ երախտավորը («Խմբագրի կողմից» առաջաբանով): «Զանգակ-97», Երևան, 2006, 24 էջ:

*Կենտրոնի գիտական  
հետաքրքրությունների շրջանակներում են  
հետևյալ թեմաները (2008-2010)՝*

1.«Ժամանակակից վրաց լեզվի շարահյուսություն».այն ունի տեսական և գործնական նշանակություն ԵՊՀ հունահիտար ֆակուլտետների, Վրաստանի հայկական դպրոցների, հայերենի ու վրացերենի աղերսներն ուսումնասիրողների, հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն թարգմանություններ կատարողների համար:

2. Ջավախքը վրաց և հայ մատենագրության և քաղաքականության մեջ (պատմություն և այժմեականություն):

Աշխատանքի նպատակն է երկրամասի պատմության և ժամանակակից հիմնահարցերի ուսումնասիրությունը՝ ըստ վրաց և հայ մատենագրության ու պարբերական մամուլի:

Հետազոտության արդյունքները կնպաստեն Վրացահայ հատվածի պատմության և ժամանակակից հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

3. «Հայ-վրացական պատմամշակութային հարցերը վրաց ընթացիկ մամուլում». նյութերի թարգմանություն:

Ռեֆերատիվ թողարկումը հնարավորություն կընձեռի հայ մասնագետներին՝ ծանոթանալու հոդվածներին և իրենց խոսքն ասելու դրանց մասին, քանզի շոշափվում են հայագիտության (պատմություն, գրականություն, լեզու, արվեստի տարբեր ոլորտներ) խնդիրները ևս:

**Ծրագրերի ղեկավար՝ Բ.գ.թ., դոց. Հր. Բայրամյան:**



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ  
ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՍ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ներկայացնում եմ վրացագիտության կենտրոնի  
գիտահետազոտական աշխատանքների  
երկամյա (2007-2008) և եռամյա (2009-2011)  
պլան-ուրվագիրը և խնդրում Ձեր կարծիքը

2007-2008

«Վրաց պետականության զարգացումը XVII-XVIII դդ.» (կատարող՝  
պ. գ. դ., պրոֆ. Պ. Չոբանյան)։

«Հայ-վրացական հարաբերությունները IX-XI դդ. (կատարող՝ պ. գ.  
դ., պրոֆ. Հ. Մարգարյան)։

«Վրաց գրականություն (V-XIX դդ.)», ձեռնարկ ուսանողների  
համար (կատարող՝ բ. գ. թ., դոց. Հր. Բայրամյան)։

«Ընդհանուր գործածական բառերը հայոց և վրաց լեզուներում»  
(կատարող՝ բ. գ. թ., դոց. Ռ. Գորգաձե)։

«Հայ գավառական մամուլը Վրաստանում (1885-1920 թթ.)»  
(կատարող՝ բ. գ. թ. Վլ. Մաղալյան)։

Լ. Մելիքսեթ-Բեկ, «Վարդապետը հայոց հյուսիսային կողմանց»  
(թարգմ.՝ կ/գ Ջ. Թամարյան, խմբագրում և ծանոթագրություններ՝ / /  
...յան)։

Իլ. Աբուլաձե, «Վրաց-հայկական գրական կապերը IX-X դդ.»  
(թարգմանություն, առաջաբան, ծանոթագրություններ. կատարող՝  
պ. գ. դ., պրոֆ. Հ. Մարգարյան)։

«Քարթլիս ցխովրեբա»-յի հին հայերեն թարգմանության  
վերահրատարակություն՝ աշխարհաբար զուգահեռ թարգմանությամբ  
(կատարող՝ պ. գ. դ., պրոֆ. Հ. Մարգարյան)։

Պապ. Օրբելիանի (XVIII դ.), «Պատմություն» (թարգմանություն և  
ծանոթագրություններ, կատարող՝ պ. գ. դ., պրոֆ. Պ. Չոբանյան)։

«Գեորգի Լաշային ժամանակակից մատենագիր» (թարգմանութ. և  
ծանոթագրություններ, կատարող՝ պ. գ. դ., պրոֆ. Հ. Մարգարյան)։

«Վրաց լեզու. հնչյունաբ., բառագիտ., ձևաբ.» (ձեռնարկ  
ուսանողների համար, կատարող՝ բ. գ. թ., դոց. Հր. Բայրամյան)։

«Վրաց լեզու. շարահյուսություն» (ձեռնարկ ուսանողների համար,  
կատարող՝ բ. գ. թ., դոց. Ռ. Գորգաձե)։

«Հայ նորագույն մամուլը Վրաստանում (1921-1991)» (դոկտ.  
ատենախոսություն, կատարող՝ բ. գ. թ. Վլ. Մաղալյան)։

«Հայ նորագույն գրականությունը Վրաստանում (1945-2005)»  
(կատարող՝ բ. գ. թ. Վլ. Մաղալյան)։

«Հայ գիրքը և գրատպությունը Վրաստանում հետպատերազմյան  
տարիներին» (կատարող՝ բ. գ. թ. Վլ. Մաղալյան)։

«Հովհաննես Թումանյանը վրաց գրական մտքի գնահատմամբ»  
(կատարող՝ հայցորդ Կ. Մանուկյան, Թբիլիսի)։

Կենտրոնի աշխատակիցների ուժերով կազմել ուսումնամեթոդական ընթերցարաններ, քրեստոնատիաներ, ձեռնարկներ համապատասխան բառարաններով:

Չետևել Վրաստանում լույս տեսնող գրականությանը, որոնցում արժարժվում են հայ-վրաց գրական-պատմամշակութային կապերը և Չայաստանի նկատմամբ քաղաքականության հարցերը:

Գործակցել Վրաստանի համապատասխան կենտրոնների հետ, կատարել նյութերի փոխանակում:

Անցկացնել վրացագիտական ամենամյա սեմինար՝ ուսանողների և դասախոսների մասնակցությամբ:

Ղեկավարել վրացերենն ուսումնասիրող խմբերի կուրսային և դիպլոմային աշխատանքները:

ՉԳ. Որոշ թեմաներ իրականացնել պայմանագրային հիմունքներով:

**Նախագծի հեղինակ՝ Չրաչիկ Բայրամյան  
12 փետրվարի 2007 թ.**

#### Վրացագիտության կենտրոնի բացման առթիվ

Չայ-վրաց գրական, պատմամշակութային կապերն սկիզբ են առել երկու ժողովուրդների գրերի ու դպրության ծննդյան օրվանից և դարից դար փոխանցվել ուսանելի ավանդներով, ապահովել բարեկամության ու համագործակցության շարունակական ընթացք:

Այդ կապերը նոր բովանդակություն ստացան, երբ Վրաստանն ու Չայաստանը ունեցան համալսարաններ:

Թբիլիսիի համալսարանը հիմնադրվել է 1918 թ. հունվարի 26-ին և առաջին իսկ օրից նրա ուսումնական ծրագրերում հայագիտական առարկաներից եղել են գրաբար, ժամանակակից հայոց լեզու և հայ հին պատմական գրականություն:

1922 թվականից հիշյալ համալսարանում գործում է հայագիտության ամբիոնը, 1945-ից՝ հայոց լեզվի և գրականության բաժինը:

Երևանի համալսարանում վրացերենի ուսումնասիրությունը, այն էլ երկարատև ընդհատումներով, սկսվեց 1966 թ. հոկտեմբերին, երբ բանասիրական ֆակուլտետին կից սկսեց գործել Շ. Ռուսթավելու անվան ուսումնական կաբինետը (գործում էր վրացերենն ուսումնասիրողների խմբակ), իսկ 1970 թվականին՝ հայ-վրացական բանասիրության գիտահետազոտական խումբը:

Չատկապես Վրացագիտության կենտրոնի հիմնադրումը, քաղաքական նշանակություն ունենալուց բացի, հնարավորություն կընձեռի կյանքի կոչել գիտության այն բնագավառը, որտեղ բեղուն գործունեություն են ծավալել Բրոսեն, Մառը, Ադոնցը, Խալաթյանը, Մելիքսեթ-Բեկը, Աբուլաձեն, Շանիձեն, Սուրեն Երեմյանը, Գուրգեն Սևակը և ուրիշներ, կաճեցվեն սեփական կադրեր, կխորացվեն մեր բուհերի կապերը, կուսումնասիրվի Վրաստանի պատմությունը, գրականությունը, լեզուն ու մշակույթը. ազգամիջյան և պատմական վիճահարույց որոշ

հարցեր գուցե թե լուսաբանվեն համատեղ ուժերով: Դրան հասնելու համար առաջին հերթին պետք է համախմբել հայ և վրաց վրացագետ-հայագետներին այն աշխատանքների մեջ, որոնք կառնչվեն երկու երկրների հոգևոր ու նյութական արժեքների վիճահարույց լինելուն:

Նման մոտեցումը կդառնա այն հենքը, որի վրա կբարձրանա հարաբերությունների նորովի կռուցվող շենք, որ, թերևս, վերածվի այդ կապերի լուսավոր կենտրոնի: Սա է օրինաչափն ու ուսանելին դարավոր ավանդույթներ ունեցող ժողովուրդների կյանքում, թե չէ օտարվում են համալսարանները, մշակույթները, վտանգվում է դարերի խորքից եկող բարեկամությունը:

Նշվածից բացի այսօր կյանքի տարբեր բնագավառներում զգացվում է հատկապես հայ վրացագետների պահանջ:

Նման կենտրոն և մասնագիտացում ունենալը ժամանակի թելադրանքն է և հրամայականը:

Հրաչիկ Բայրամյան

Վրացագիտության  
հայկական կենտրոնի տնօրեն

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ,  
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ  
ՀՀ ԳԱ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ,  
ՊՐՈՖ. Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆԻՆ

## Մ Ի Զ Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ր

*ԵՊՀ ՀՀԻ վրացագիտության հայկական կենտրոնի ղեկավար  
Հրաչիկ Սմբատի Բայրամյանին առաջատար գիտական աշխատողի  
կոչում շնորհելու մասին:*

Հր. Բայրամյանը բանասիրական գիտությունների թեկնածու է, դոցենտ, ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դասախոս (ներքին համատեղություն. 0.5 դրույք): Նա ճանաչված դեմք է Հայաստանի և Վրաստանի գիտական և գրական շրջանակներում: Հեղինակ է վրաց գրականության պատմության (2007) և վրաց լեզվի (2010), բուհական ձեռնարկների, հայերեն-վրացերեն (2006, II հրատ., 2009), ռուսերեն-վրացերեն (2006) զրուցարանների, հայ-վրաց գրական-մշակութային կապերի պատմությանը նվիրված մենագրության (2010), հայ-վրաց բանասիրության տարբեր գիտաճյուղերին նվիրված շուրջ 120 հոդվածների, գրախոսությունների ու հրապարակումների: Ձեկուցումներով հանդես է գալիս հայագիտությանն ու վրացագիտությանը նվիրված միջազգային գիտաժողովներում, ինչպես նաև պատմական ու հոբելյանական տարեթվերի առթիվ կազմակերպված հանդիսավոր նիստերում: Զգալի է նրա ավանդը վրաց դասական և ժամանակակից գրականությունը հայերեն թարգմանելու, անթուղոգիաներ ու ժողովածուներ ստեղծելու գործում (20 գիրք):

Հր. Բայրամյանը ԵՊՀ ՀՀԻ գիտական խորհրդի, Հայաստանի գրողների միության (1985), Հայաստան-Վրաստան ընկերության վարչության (1990) անդամ է: Հայ-վրաց գրական-մշակութային կապերի ամրապնդման գործում ներդրած ավանդի, վրաց դասական և ժամանակակից գրողների երկերի բարձրորակ թարգմանությունների, հայ-վրաց բանասիրությանը նվիրված ուսումնասիրությունների համար արժանացել է Վրաստանի Գրողների ստեղծագործական միության Իվանե Մաչաբելու անվան մրցանակի (2006) և Թբիլիսիի քաղաքապետարանի «Վրացական մշակույթի բարեկամ» ոսկե մեդալի ու «Պատվո դիպլոմ»-ի (2010):

Հր. Բայրամյանը գիտամանկավարժական և հասարակական գործունեությամբ արժանի է *առաջատար գիտական աշխատողի* որակավորման:

ԵՊՀ ՀՀԻ գիտական խորհուրդ  
ԵՊՀ ՀՀԻ վրացագիտության  
հայկական կենտրոնի խորհուրդ

Կենտրոնի ղեկավարը հեղինակել և հրատարակել է «Վրաց գրականությունը V-XIX դդ.», բուհական ձեռնարկը (2007), հայերեն-վրացերեն (2006, II հրատ. 2009), ռուսերեն-վրացերեն (2006) զրուցարանները, նրա իսկ խմբագրությամբ լույս է տեսել Ռ. Գորգաձեի վրացերեն-հայերեն մեծածավալ բառարանը (2006):

Հր. Բայրամյանը զբաղվում է վրաց դասական և ժամանակակից գեղարվեստական գրականության թարգմանությամբ ևս: Լույս է ընծայել շուրջ 20 գիրք՝ վեպեր, վիպակներ, պատմվածքների ու նովելների ժողովածուներ: Կազմել, խմբագրել և ծանոթագրել է «Վրացական պոեզիա» («Ուսանողի գրադարան», 1983), «Վրաց երկինք» արձակի («Համաշխարհային գրականություն պատանիների համար» մատենաշար, 1990) անթոլոգիաները, հայ-վրաց գրական-մշակութային կապերին վերաբերող 3 տարաբնույթ ժողովածու (1986, 1999, 2001), որոնք կարող են օգտագործվել որպես օժանդակ ձեռնարկներ ինչպես բանասերների ու պատմաբանների, այնպես էլ մշակութային բախումնաբանություն (կոնֆլիկտոլոգիա) ուսումնասիրողների համար: Նա ավելի քան 60 ուսումնասիրությունների, 100 ավելի հոդվածների, գրախոսությունների ու հրապարակումների հեղինակ է:

Ականավոր հայագետներ և վրացագետներ ֆրանսիացի ժան Պիեռ Մահեն, շոտլանդացի Փիթեր Քաուեն և սլովակ շնորհալի թարգմանչուհի Օլգա Ռովենսկան, որպես ստաժորներ, վրացերենի նախնական գիտելիքներն ստացել են Հր. Բայրամյանի մոտ: Նա դասավանդում է վրաց գրականության պատմություն և վրաց լեզու, տեսական և գործնական թարգմանություն, ղեկավարում է դիպլոմային, կուրսային աշխատանքներ, ՈՒԳԸ զեկուցումներ և այլն:

Հայ-վրաց գրական-մշակութային կապերի ամրապնդման գործում ներդրած ավանդի, վրաց դասական և ժամանակակից գրողների երկերի բարձրորակ թարգմանությունների և հայ-վրաց բանասիրությանը նվիրված ուսումնասիրությունների համար Հր. Բայրամյանը պարգևատրվել է Վրաստանի Գրողների ստեղծագործական միության Իվանե Մաչաբելու անվան մրցանակով (2006) և Թբիլիսիի քաղաքապետարանի «Վրացական մշակույթի բարեկամ» ոսկե մեդալով ու «Պատվո դիպլոմ»-ով:

\*\*\*\*\*

Հր. Բայրամյանը հեղինակ է վրաց գրականության և վրաց լեզվի դասագրքերի, զրուցարանների, շուրջ 60 գիտահետազոտական աշխատանքների:

Լեզուները՝ հայերեն, վրացերեն, ռուսերեն, պարսկերեն, գերմաներեն:

Կուսակցական պատկանելիությունը՝ անկուսակցական:

Ընտանեկան դրությունը՝ ամուսնազած, ունի երկու զավակ՝ մեկ տղա և մեկ աղջիկ:

Հեռ. /37410 61-54-04/, /37494/84-48-64

Էլ փոստ՝ h.bayramyan@ysu.am

h. h.bayramyan@ysu.am

Գիտական հետազոտությունները վերաբերում են վրաց հին, նոր ու նորագույն գրականությանը, վրաց լեզվին, հայ-վրացական գրական

առնչություններին, հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն թարգմանություններին և թարգմանության տեսությանը: Կատարում է նաև զեղարվեստական թարգմանություններ: Հայ բանասիրության ֆակուլտետում դասավանդում է վրացագիտական առարկաներ /ներքին համատեղություն, 0.5 դրույք/:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ,  
ՀՀ ԲԿԳ ՆԱԽԱՐԱՐ Լ. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ,  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ,  
ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ,  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ,  
ՊՐՈՖ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ,  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ,  
ԴՈՑ. Գ. ՄԵԼԻՔՅԱՆԻՆ

Հայ-վրաց գրական, պատմամշակութային կապերն սկիզբ են առել երկու ժողովուրդների գրերի ու դպրության ծննդյան օրվանից և դարից դար են փոխանցվել ուսանելի ավանդներով, ապահովել բարեկամության ու համագործակցության շարունակական ընթացք: Այդ կապերը նոր որակ և նոր բովանդակություն ստացան, երբ Վրաստանն ու Հայաստանը ունեցան ազգային համալսարաններ: Թբիլիսիի համալսարանում (հիմնադրվել 1918թ. հունվարին) 1922թ. գործում է հայագիտության ամբիոնը, 1945-ից՝ հայոց լեզվի և գրականության բաժինը: Երևանի պետական համալսարանում հայ-վրաց գրական-մշակութային առնչությունների ուսումնասիրությունն սկսվեց 1970 թ., երբ հայագիտական կենտրոնում ստեղծվեց գիտահետազոտական խումբ (1990-ից ի վեր նրանում ընդամենը մեկ գիտաշխատող է՝ տողերիս հեղիանակը):

1980-ական թթ. կեսերից երկու համալսարանների միջև գրեթե խզվել են գիտամշակութային կապերը: Այդ տարիներից վրաց իրականության մեջ սկիզբ է առել հակահայ հիստերիա, որ գնալով ավելի է ծավալվում ու սաստկանում: Վրացի մասնագետները, փորձելով վերագնահատել ազգային արժեքներ ու խնդիրներ, իրենց հրապարակումներում առաջադրում են կամայական, հակագիտական լուծումներ ու սկզբունքներ: Ավագ թե կրտսեր, մեկը մյուսին լրացնելով, նվաստացնում կամ պարզապես ժխտում են այդ երկրի շենացմանը մատուցած հարյուրավոր հայրողիների ծառայությունները: Անտեսվում է այն իրողությունը, որ Վրաստանում հանգրվանած հայերն զբաղվել են ոչ միայն արհեստներով ու առևտրով, այլև ներգրավվել են հասարակական-քաղաքական կյանքի մեջ, մասնակցել նրա պաշտպանության ու անկախության համար մղված մարտերին, նպաստել տնտեսության, գիտության, արվեստի ու գրականության, առհասարակ ամբողջ մշակույթի զարգացմանը: Տուրք տալով ազգային սնապարծությանը՝ վրացի հեղինակները գրում են՝ կեղծն ու ցանկալին ներկայացնելով իբրև ճշմարտություն: Կանխակալ կարծիքները, հակագիտական, պարզապես թշնամանք սերմանող տրամադրություններն արդեն իսկ մուտք են գործել դպրոցական ու բուհական դասագրքեր և զգալի ազդեցություն են թողնում սերնդի գիտական ու քաղաքական մտքի վրա:

Չի կարող արդարացվել արդի վրաց մամուլի ընդգծված հակահայ ուղղվածությունը (այս մասին տե՛ս «Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում» ժողովածուում, Եր., 2001):

Ցավալի է, որ մեզանում հիմնավոր կրթությամբ վրացագետներ չլինելու պատճառով այդ մեղադրանքներն ու հարձակումները մնում են անպատասխան:

Անհրաժեշտ է մայր բուհում վրացագիտության ամբիոն կամ թեկուզ բաժին հիմնադրել: Դա, գիտական և քաղաքական մեծ նշանակություն ունենալով հանդերձ, հնարավորություն կընձեռի աճեցնել սեփական կադրեր, զարգացնել վրացագիտությունը, որը խթան կդառնա երկու համալսարանների գիտագործնական կապերի վերականգնմանը, Հայաստանի և Վրաստանի հարաբերությունների ու մշակութային արտաքին քաղաքականության բարելավմանը և, որ պակաս կարևոր չէ, ազգամիջյան և պատմամշակութային վիճահարույց շատ հարցեր կլուսաբանվեն անաչառ վերլուծությամբ: Նշվածից բացի, այսօր պետական ապարատում, քաղաքականության, դիվանագիտության, թարգմանության, իրավագիտության, բիզնեսի և այլ բնագավառներում աշխատանքների համար զգացվում է հայ վրացագետների խիստ պահանջ:

Մի քանի տարի է՝ բանասիրական ֆակուլտետում դասավանդվում է ժամանակակից վրաց լեզու և վրաց գրականության պատմություն, պատմության ֆակուլտետում՝ ժամանակակից վրացերեն և Վրաստանի արվեստի պատմություն, բանասիրական ֆակուլտետին առընթեր գոյություն ունի Շ. Ռուսթավելու անվան ուսումնական կաբինետ, որ, սակայն, իր նպատակին չի ծառայում լսարան դարձնելու պատճառով: Համալսարանում կան մասնագետներ, ովքեր կարող են դասավանդել վրացագիտական առարկաներ, մասնավորապես՝ Վրաստանի պատմություն և վրաց աղբյուրագիտություն (պ.գ.դ., պրոֆ. Յ. Մարգարյան), ժամանակակից վրաց լեզու և վրաց գրականության պատմություն (բ.գ.թ., դոց. Հր. Բայրամյան), հին վրացերեն (բ.գ.թ., դոց. Բ. Ներսիսյան) և հայոց ու վրաց լեզուների համեմատական քերականություն (բ.գ.թ. Շ. Գևորգյան):

Երևանի պետական համալսարանում վրացագիտության ամբիոն կամ բաժին ունենալը (նպատակահարմար է՝ պատմության ֆակուլտետում) ժամանակի հրամայականն է, թե չէ օտարվում են ոչ միայն երկու համալսարանների գիտակրթական և ուսումնական կապերը, այլև Հայաստանի և Վրաստանի մշակույթները, ավելին՝ վտանգվում է երկու երկրների՝ դարերի խորքից եկող բարեկամությունը (սկզբնական շրջանում կարելի է կատարել 6-8 ուսանողի ընդունելություն՝ 4 տարին մեկ պարբերականությամբ):

Հայագիտական կենտրոնի ավագ գիտաշխատող  
(դոց.Հր. Բայրամյան)

Նույնը՝ 20. IV. 2002 թ.

Նույնը՝ 12. IX. 2002 թ.

Նույնը՝ 10. XI. 2002 թ.

Ջ Ե Կ Ո Ւ Ց Ա Գ Ի Ր

Հայ-վրաց գրական, պատմամշակութային կապերն սկիզբ են առել երկու ժողովուրդների գրերի ու դպրության ծննդյան օրվանից և սերնդից սերունդ փոխանցվել ուսանելի ավանդներով, ապահովել բարեկամության ու համագործակցության շարունակական ընթացք: Այդ կապերը նոր բովանդակություն ստացան, երբ Վրաստանն ու Հայաստանը ունեցան ազգային համալսարաններ: Թբիլիսիի համալսարանում 1922 թ. գործում է հայագիտության ամբիոն, 1945-ից՝ հայոց լեզվի և գրականության բաժին: Երևանի համալսարանում այդ կապերի ուսումնասիրությունն սկսվեց 1966 թ., երբ բանասիրական ֆակուլտետին կից Շոթա Ռուսթավելու ծննդյան 800-ամյակի առթիվ նրա անվան հայ-վրացական բանասիրության ուսումնական կաբինետ հիմնադրվեց, իսկ կաբինետի հիման վրա 1970 թ. ստեղծվեց հայ-վրացական բանասիրության գիտահետազոտական խումբ և մտավ հայագիտական կենտրոնի համակարգ:

1980-ական թթ. երկրորդ կեսից երկու համալսարանների միջև եթե ոչ խզվել, ապա ընդհատվել են ուսումնական և գիտամշակութային կապերը: Այդ տարիներից ի վեր վրաց իրականության մեջ սկիզբ է առել հակահայ հիստերիա, որ գնալով ծավալվում ու սաստկանում է: Վրացի մասնագետները, փորձելով վերագնահատել ազգային արժեքներ ու խնդիրներ, առաջադրում են կամայական, հակագիտական լուծումներ ու սկզբունքներ: Ավագ թե կրտսեր, մեկը մյուսին կրկնելով ու լրացնելով, նվաստացնում կամ պարզապես ժխտում են այդ երկրի շենացմանը մատուցած հարյուրավոր հայորդիների ծառայությունները: Անտեսվում է այն իրողությունը, որ Վրաստանում հանգրվանած հայերն զբաղվել են ոչ միայն արհեստներով ու առևտրով, այլև ներգրավվել են հասարակական-քաղաքական կյանքի մեջ, մասնակցել նրա պաշտպանության ու անկախության համար մղված մարտերին, նպաստել տնտեսության, գիտության, արվեստի ու գրականության, առհասարակ ամբողջ մշակույթի զարգացմանը: Տուրք տալով ազգային սնապարծությանը՝ վրացի հեղինակները գրում են՝ կեղծն ու ցանկալին ներկայացնելով իբրև ճշմարտություն: Կանխակալ կարծիքները, հակագիտական, պարզապես թշնամանք սերմանող տրամադրություններն արդեն իսկ մուտք են գործել դպրոցական ու բուհական դասագրքեր և զգալի ազդեցություն են թողնում սերնդի գիտական ու քաղաքական մտքի վրա: Չի կարող արդարացվել արդի վրաց մամուլի ընդգծված հակահայ ուղղվածությունը, որ, անշուշտ, քաղաքական կարճատեսության դրսևորում է (այս մասին է տողերիս հեղինակի կազմած, թարգմանած և լույս ընծայած «Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում 1988-1990 թթ.» նյութերի ժողովածուն, Երևան, «Ձանգակ-97», 2001 թ.):



Ցավալի է, որ մեզանում հիմնավոր կրթությամբ մասնագետներ չունենալու պատճառով նման մեղադրանքներն ու հարձակումները մնում են անպատասխան (ի վերջո՝ ի՞նչ է նշանակում վրացագիտություն մեզ համար. այսօր նախ և առաջ դա նշանակում է հայոց նյութական և հոգևոր արժեքների պաշտպանություն օտարի ասպատակություններից):

Մայր բուհում վրացագիտության ամբիոն կամ թեկուզ բաժին հիմնադրելով՝ գիտական և քաղաքական մեծ նշանակություն ունենալով հանդերձ, հնարավորություն կընձեռվի աճեցնել սեփական կադրեր, որ խթան կդառնա երկու համալսարանների գիտագործնական կապերի վերահաստատմանը, Հայաստանի և Վրաստանի հարաբերությունների ու մշակութային արտաքին քաղաքականության բարելավմանը և, որ պակաս կարևոր չէ, ազգամիջյան և պատմամշակութային վիճահարույց շատ հարցեր կլուսաբանվեն երկկողմանի, անաչառ վերլուծությամբ: Նշվածից բացի, այսօր պետական ապարատում, դիվանագիտության, զեղարվեստական թարգմանության, բիզնեսի և այլ բնագավառներում աշխատանքների համար զգացվում է հայ վրացագետների խիստ պահանջ:

Մի քանի տարի է՝ բանասիրական ֆակուլտետում դասավանդվում է ժամանակակից վրաց լեզու և վրաց գրականության պատմություն, կատմության ֆակուլտետի արվեստաբանության բաժնում՝ ժամանակակից վրացերեն (ժամաքանակները բավարար չեն մասնագետ պատրաստելու համար), բանասիրական ֆակուլտետին առընթեր գոյություն ունի Շոթա Ռուսթավելու անվան գիտաուսումնական կաբինետ, որ, սակայն, իր նպատակին չի ծառայում՝ մի դեպքում լսարան, մեկ այլ դեպքում՝ «դասախոսական» դարձնելու պատճառով և որտեղ աշխատում է ընդամենը մեկ ուսումնական լաբորանտ: Մինչդեռ համալսարանում կան զգալի թվով մասնագետներ, ովքեր կարող են դասավանդել վրացագիտական առարկաներ (պ. գ. դ., պրոֆ. Յ. Մարգարյան, բ. գ. թ., դոց. Յր. Բայրամյան, բ. գ. թ., դոց. Բ. Ներսիսյան, բ. գ. թ. Շ. Գևորգյան և ուրիշներ):

Ժամանակի հրամայականն է երևանի պետական համալսարանում ունենալ վրացագիտության (կարելի է կոչել նաև հայ-վրացական բանասիրության) ամբիոն, բաժին, թեկուզ խումբ (սկզբնական շրջանում կարելի է կատարել 6-8 ուսանողի ընդունելություն՝ 3-4 տարին մեկ պարբերականությամբ): Իսկ եթե դա էլ անհնար է, վրացերենը, իբրև երկրորդ-երրորդ օտար լեզու, ընդգրկել բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլանների մեջ՝ անհրաժեշտ ժամաքանակով, և կյանքի կոչել գիտական այն գնագավառը, ուր բեղուն աշխատանքներ են կատարել Մ. Բրոսեն, Զ. Պատկանյանը, Ն. Մառը, Ն. Ադոնցը, Գ. Խալաթյանը, Լեոն, Լ. Մելիքսեթ-Բեկը, Ս. Երեմյանը և այլք: Թե չէ օտարվում են ոչ միայն երկու բուհերի գիտաուսումնական կապերը, այլև Հայաստանի և Վրաստանի մշակույթները, ավելին՝ վտանգվում է երկու երկրների՝ դարերի խորքից եկող սրբագործված բարեկամությունը:

Հայագիտական կենտրոնի ավագ գիտաշխատող  
(բ. գ. թ., դոց. Յր. Բայրամյան)

5. 06. 2006 թ.

ԵՊՀ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ  
ՇՈԹԱ ՌՈՒՄԹԱՎԵԼՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ  
ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԲԻՆԵՏԻ ՄԱՍԻՆ

Ձ Ե Կ Ո Ւ Ց Ա Գ Ի Ր

1966 թ. ԵՊՀ և ԹՊՀ բանասիրական ֆակուլտետների միջև կնքվեց փոխադարձ համագործակցության պայմանագիր, որի հիման վրա և ի նշանավորումն վրաց մեծ բանաստեղծ Շոթա Ռուսթավելու ծննդյան 800-ամյակի, հիմնադրվեց վերջինիս անունը կրող գիտաուսումնական կաբինետ: Այդ առթիվ հրավիրված գիտական նստաշրջանում հայ-վրացական բանասիրության խնդիրներին, որ հանիրավի դուրս էր մնացել հայոց մայր բուհի ուսումնական ծրագրերից ու գիտական ոլորտից, նվիրված զեկուցումներ կարդացին ակադեմիկոսներ Ս. Ներսիսյանը, Գ. Սևակը, Մ. Սկրյանը, Է. Ջրբաշյանը, ԹՊՀ պրոֆեսորներ Ա. Շանիձեն, Ա. Ուրուշաձեն, Պ. Կեկելիձեն, Ս. Խուցիշվիլին, Ի Մեգրելիձեն:

Կաբինետի աշխատանքները ավելի ամուր հիմքերի վրա դնելու նպատակով ֆակուլտետի դեկան, պրոֆ. Մ. Սկրյանը և հայոց լեզվի ամբիոնի վարիչ, ակադ. Գ. Սևակը ձեռնամուխ եղան թբիլիսիի բուհերի համապատասխան ֆակուլտետների ու ամբիոնների հետ կապեր հաստատելու և անհրաժեշտ գրականություն ձեռք բերելու գործին:

1967-1968 թթ. ուս. տարում արևելագիտության բաժնի բարձրկուրսեցի երկու ուսանող գործուղվեց թբիլիսիի համալսարանի բանասիրական ֆակուլտետ՝ վրաց լեզու սովորելու, որով հիմք դրվեց նաև ուսանողներ փոխանակելու ավանդույթին: Երկու համալսարանների համապատասխան դասընթացները, ապա և նպատակային ասպիրանտուրան ավարտելուց հետո նրանցից մեկը՝ տողերիս հեղինակը, վերադարձավ մայր բուհ և այսօր էլ շարունակում է գիտական, մանկավարժական և թարգմանչական գործունեությունը: Ուսումնական կաբինետի հիման վրա (Գ. Սևակ, Ռ. Գորգաձե, Հր. Բայրամյան, Ց. Ջեղզիհիձե, Ռ. Գրիգորյան և Ն. Մոսեսովա) 1970 թ. ստեղծվեց հայ-վրացական բանասիրության հետազոտական խումբ և մտավ հայագիտական կենտրոնի համակարգ:

Կաբինետի ամենաակտիվ մասնակցությամբ գիտական նստաշրջաններ կամ սեսիաներ են հրավիրվել ակադ. Ա. Շանիձեի ծննդյան 80 (1968), բանաստեղծ Ն. Բարաթաշվիլու ծննդյան 150 (1968), Գ. Սունդուկյանի ծննդյան 150 (1976), Ի. Ճավճավաձեի ծննդյան 140 (1978), Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միավորման 150-ամյակների (1978) առթիվ, որտեղ զեկուցումներով հանդես են եկել թե՛ աշխատակիցները և թե՛ թբիլիսիից հրավիրված գրականագետներ ու արվեստաբաններ:

Ուսումնական կաբինետի և գիտահետազոտական խմբի աշխատանքները մինչև մահը (1981) ղեկավարել է պրոֆ. Գ. Սևակը:

1981-ից հայ-վրացական բանասիրության խմբի և ուսումնական կաբինետի գիտական ղեկավարի պարտականությունը հասարակական հիմունքներով կատարում է հայագիտական կենտրոնի ավագ գիտաշխատող Յր. Բայրամյանը:

Գեղարվեստական գրականության պրոպագանդան լավագույն միջոցը, անշուշտ, թարգմանությունն է. առանձին գրքերով լույս են տեսել վրաց դասական և ժամանակակից գրողների 20 գրքեր, իսկ գրական հանդեսներում և մամուլում՝ ավելի քան 100 պատմվածք ու նորավեպ (բոլորը՝ Յր. Բայրամյանի թարգմանությամբ):

Խմբի աշխատակիցները անցկացրել են նաև մշակութային միջոցառումներ՝ գրքերի քննարկումներ, հանդիպումներ վրաց գրականության ու արվեստի գործիչների հետ, կազմակերպել են վրացագիտությանն ու հայ վրացական բանասիրությանը նվիրված հարց ու պատասխանի երեկոներ, դասախոսություններ, բացել են վրաց լեզվի ուսուցման խմբակներ:

Յիննադրման տարում կաբինետի գիտաուսումնական աշխատանքներում ընդգրկված էին մեկ ակադեմիկոս, գիտությունների երկու թեկնածու, մեկ կրտսեր գիտաշխատող, մեկ ասպիրանտ և երկու լաբորանտ, ներկայումս... ընդամենը՝ մեկ լաբորանտ: Տարիների ընթացքում նվազել է աշխատողների թվային կազմը, բայց երբեք չի համալրվել:

Այժմ բանասիրական ֆակուլտետում դասավանդվում է վրաց լեզու և վրաց գրականության պատմություն, պատմության ֆակուլտետի արվեստաբանության բաժնում՝ ժամանակակից վրացերեն, մինչդեռ մայր բուհում վրացագիտության ամբիոն, բաժին կամ գոնե խումբ ունենալը ժամանակի հրամայականն է:

Յրաչիկ Բայրամյան

Յայագիտական կենտրոնի  
հայ-վրացական բանասիրության  
գիտահետազոտական  
խմբի ղեկավար  
ավագ գիտական աշխատող

05.06. 2006

### ***Թբիլիսիի համալսարանի 90-ամյակի առթիվ***

Հայաստանը և Վրաստանը իրենց արշալույսից ի վեր ունեցել են ռազմաքաղաքական, առևտրատնտեսական, կրոնադավանաբանական սերտ առնչություններ:

Գրական, պատմամշակութային կապերը և գիտական համագործակցությունը, սակայն, սկզբնավորվել են փոքր-ինչ ավելի ուշ՝ գրերի ու դպրության ծննդյան օրվանից և դարից դար փոխանցվել՝ ապահովելով ուսանելի ավանդներ:

Այդ կապերը նոր բովանդակություն ստացան, երբ Վրաստանն ու Հայաստանը ունեցան իրենց ազգային համալսարանները:

Թբիլիսիի համալսարանը հիմնադրվել է 1918 թ. հունվարի 26-ին, Դավիթ Շինարարի հիշատակի օրը, և ուսումնական առաջին իսկ տարուն նրա ուսումնական պլաններում տեղ գտան հայագիտական առարկաներ՝ գրաբար, աշխարհաբար, հայ հին պատմական գրականություն: Հիշյալ համալսարանում 1922 թ-ից գործում է հայագիտության ամբիոնը, 1945-ից՝ հայոց լեզվի և գրականության բաժինը:

Խորհրդային Միության փլուզումից հետո հայ-վրացական հարաբերությունների մթնոլորտը շիկացավ: Պատճառն ընդհանուր էր. հոգևոր կյանքի բնագավառները քաղաքականացվեցին. սկսնակ թե առաջատար գիտաշխատողները տուրք էին տալիս կեղծ հայրենասիրությանը՝ անտեսելով ճշմարտությունն ու գիտական անաչառությունը: Գրեթե խզվեցին Հայաստանի և Վրաստանի գրական-մշակութային կապերը: Օտարվում էին երկու ժողովուրդ, փոխներթափանցված երկու մշակույթ, նույնիսկ բարեկամ մարդիկ: Սառույցը շարժվեց 2006-ի մայիսից, երբ ԵՊՀ-ի բարձրագույն օղակներում տեղի ունեցան փոփոխություններ: Այդ փոփոխություններից ընդամենը մի քանի օր անց համալսարանականները նորընտիր ղեկավար, պրոֆեսոր Արամ Սիմոնյանի ղեկավարությամբ մասնակցեցին Երևանում անցկացվող վրացական պոեզիայի օրերին, որ կազմակերպվեց նաև մայր բուհում, այդ առթիվ համալսարանում անցկացվեց նաև արդի վրաց գրականությանը և հայ-վրաց պատմամշակութային առնչություններին նվիրված գիտական նստաշրջան: Նույն օրը պրոֆ. Արամ Սիմոնյանը գործնական հանդիպում ունեցավ Հայաստանում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան, պարոն Ռևազ Գաչեչիլաձեի հետ, հաջորդեց պարոն Սիմոնյանի այցը Բաթում, որտեղ կնքվեց համագործակցության պայմանագիր: Անցյալ ուսումնական տարվա սկզբին Թբիլիսիի պետական համալսարանի ղեկավար, պարոն Գեորգի Խուբուան այցելեց մեր համալսարան, և կնքվեց ևս մեկ հուշագիր: Մեկ տարի է՝ ղեկավար Արամ Սիմոնյանի նախաձեռնությամբ և անմիջական ղեկավարությամբ գործում է ԵՊՀ վրացագիտության հայկական կենտրոնը, որի հիմնադրումը, քաղաքական նշանակություն ունենալուց բացի, հնարավորություն է ընձեռում կյանքի կոչել գիտության մի բնագավառ, ուր բեղուն գործունեություն են ծավալել Բրոսեն, Մառը, Ադոնցը,

Մելիքսեթ-Բեկը, ակադ.ակադ. Գուրգեն Սևակը, Սուրեն Երեմյանը, Իվանե Ջավախիշվիլին, Ակակի Շանիձեն, Իլյա Աբուլաձեն, Ջազա Ալեքսիձեն և ուրիշներ:

Հուշագրերին ու պայմանագրերին զուգահեռ կատարվեցին նաև զգալի աշխատանքներ. Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը լույս ընծայեց իմ հեղինակած առաջինն իրենց բնույթով, ծավալով ու բովանդակությամբ, վրաց գրականության պատմության, այնուհետև վրաց լեզվի բուհական ձեռնարկները, «Հայ վրացական գրական-մշակութային կապերի պատմությունից» հոդվածների ծողովածուն, վրացերեն-հայերեն սովորածավալ բառարանը իմ խմբագրությամբ, հայերեն-վրացերեն (2006 թ., II հրատ.), ռուսերեն-վրացերեն գրուցարանները, հայ բանասիրության ֆակուլտետում տասնյակ տարիներ գործում է վրաց լեզվի կանընտրական դասընթաց, իսկ այժմ նաև վրացագիտության մասնագիտացմամբ չորս կուրս՝ շուրջ քառասուն ուսանողով: Վրաց լեզվի կանընտրական դասընթաց գոյություն ունի նաև պատմության ֆակուլտետի հայ արվեստի պատմության ու տեսության բաժնում, նույն բաժնում դասավանդվում է նաև Վրաստանի արվեստի պատմություն: Նորացված համագործակցության իրողություն է ԵՊՀ ռեկտորատի և նորաբաց կենտրոնի կողմից 2008թ. ապրիլին անցկացված հայ-վրացական անդրանիկ սեմինարը, որին մասնակցեցին և զեկուցումներով հանդես եկան նաև Թբիլիսիի պետական համալսարանի հայագիտության ուղղության պրոֆեսորադասախոսական կազմի 6 ներկայացուցիչներ՝ պրոֆ. Ջազա Ալեքսիձեի ղեկավարությամբ: Այդ միջոցառումը դարձավ գիտակրթական հարաբերությունների տպավորիչ էջերից մեկը:

\* \* \*

Թբիլիսիի համալսարանը վրաց ժողովրդի ազգային վերածննդի վառ ջահերից մեկն է, նրա հոգևոր մշակույթի զարգացման, գիտության և լուսավորության կարևորագույն օջախը: Իր գոյության ընթացքում համալսարանը աճեցրել է հազարավոր մասնագետներ երկրի արդյունաբերության, գյուղատնտեսության, առողջապահության, գիտության ու կուլտուրայի, ժողովրդական կրթության բնագավառների համար, մայրն է Վրաստանի բարձրագույն կրթության ամբողջ համակարգի և Վրաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի: Գտնվում է աշխարհի առաջնակարգ համալսարանների շարքում:

Հարյուրամյակների բարձր մշակույթ ունեցող վրաց ժողովրդի համար դա շարունակությունն է բարձրագույն կրթության, զարգացման նոր աստիճան, քանզի միջնադարյան Վրաստանն ուներ եվրոպական տիպի համալսարաններ ու ակադեմիաներ. հիշենք Գելաթիի, Իդալթոյի, Թելավիի համալսարանների գործունեությունը:

Հայտնի է, որ Թբիլիսիի համալսարանը իր հիմնադրման օրից հարազատ է եղել հայ ժողովրդին, ոչ միայն այն պատճառով, որ իր ուսումնական պլանների մեջ ապահովել է հայագիտական առարկաներ, այլև այն պատճառով, որ վրացիների հետ բարձրագույն կրթություն են ստացել հարյուրավոր հայ երիտասարդներ ևս: *Չմոռանանք նաև, որ Թբիլիսիի համալսարանը Հայաստանից դուրս միակ հաստատությունն էր, որին իրավունք էր տրված հայագիտության գծով դոկտորական*

դիսերտացիաներ պաշտպանելու և հայագիտության գծով առաջին դոկտորական դիսերտացիան պաշտպանվել է հենց այբուհում. այնտեղ էլ վրացագիտության գծով իրենց ասպիրանտական ուսումնառությունն են անցկացրել Երևանի համալսարանի մի շարք շրջանավարտներ:

Այդ պատիվն ունեցել է նաև վրացագիտության կենտրոնի ներկայիս ղեկավարը:

## Տեղեկատվություն

Վրացագիտության հայկական կենտրոնի  
2010 թ. նախատեսվող ուսումնասիրությունների մասին

2010 թվականին կշարունակվեն և ավարտին կհասցվեն եռամյա պլանով (2008-2010 թթ.) նախատեսված և ԲԿԳ նախարարության կողմից հաստատված հետևյալ թեմաները.

1.«Ժամանակակից վրաց լեզվի քերականություն». այն տեսական և գործնական նշանակություն ունի ԵՊՀ հայ բանասիրության և պատմության ֆակուլտետների, Վրաստանի հայկական դպրոցների, հայերենի ու վրացերենի աղերսներն ուսումնասիրողների, հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն թարգմանություններ կատարողների համար:

2. Ջավախքը վրաց և հայ մատենագրության և քաղաքականության մեջ (պատմություն և այժմեականություն):

Աշխատանքի նպատակն է երկրամասի պատմության և ժամանակակից հիմնահարցերի ուսումնասիրությունը՝ ըստ վրաց և հայ մատենագրության ու պարբերական մամուլի:

Հետազոտության արդյունքները կնպաստեն վրացահայ հատվածի պատմության և արդիական հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

3. «Հայ-վրաց գրական-պատմամշակութային հարցերը վրաց ընթացիկ մամուլում». նյութերի թարգմանություն. պրակ II (առաջին պրակը լույս է տեսել 2001-ին):

Ռեֆերատիվ թողարկումը հնարավորություն կընձեռի համապատասխան բնագավառների վրացերեն չիմացող հայ մասնագետներին՝ ծանոթանալու թարգմանված հոդվածներին և իրենց խոսքն ասելու դրանց մասին, քանզի շոշափվում են հայագիտության (պատմություն, գրականություն, լեզու, արվեստի տարբեր ոլորտներ) խնդիրները ևս: Ցավալի է, որ մեզանում վրացիների մեղադրանքներն ու հարձակումները մնում են անպատասխան, մինչդեռ անհրաժեշտ է հայոց նյութական և հոգևոր արժեքների պաշտպանություն:

Վերոհիշյալ թեմաները հայագիտության համար խիստ անհրաժեշտ են, բայց բավարա՞ր են հայագիտության արդիականացման համար:

Վրացագիտության հայկական  
կենտրոնի ղեկավար՝  
(Հր. Ս. Բայրամյան)

29. 05. 2009 թ.

